



Բարձր տեխնոլոգիաների տեղեկագրի
համակարգող խորհրդի 19.07.2021թ. որոշմամբ

Նախագահ՝ տ.գ.դոկտոր, պրոֆեսոր

Մ.Վ.Մարկոսյան

ՀՈԴՎԱԾԻ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Էջի ֆորմատը՝ A4, լուսանցքները՝ 18 մմ (աջ, ձախ, վերև, ներքև):
2. Հոդվածի լեզուն՝ անգլերեն, տառատեսակը՝ Times New Roman, ամփոփագրերը՝ հայերեն (Unicode/GHEA Grapalat), ռուսերեն (Times New Roman): Միջտողային հեռավորությունը՝ 1,15:
3. Էջի վերին աջ անկյունում, գլխատառերով, 11 **bold** տառաչափով գրվում է խորագիրը: Տեղեկագրի համար դրանք են՝ **AGRICULTURE, ARCHITECTURE AND CONSTRUCTION, ECONOMICS, INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES, MACHINE INDUSTRY AND LOGISTICS, NATURAL SCIENCES, WATER SYSTEMS.**
4. Հաջորդ տողի ձախ անկյունում գրվում է ՀՏԴ-ն (UDC)՝ առնվազն վեց նիշ՝ 11 տառաչափով:
5. Հաջորդ տողի մեջտեղում գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ 14 **bold** տառաչափով:
6. Երկու տող ներքև, աջից, 11 **bold** տառաչափով գրվում է հեղինակի Անունը, ցանկության դեպքում՝ Հայրանվան առաջին տառը, Ազգանունը:
7. Հաջորդ տողում՝ աջից, 11 տառաչափով գրվում է կազմակերպության անվանումը:
8. Հաջորդ տողում՝ աջից, 11 տառաչափով գրվում է կազմակերպության հասցեն:
9. Երկու կազմակերպության կողմից հոդվածը ներկայացված լինելու դեպքում, 7-րդ և 8-րդ կետերը, հաջորդ տողից, կրկնվում են:
10. Հաջորդ տողում՝ աջից, 11 տառաչափով գրվում է հեղինակի էլեկտրոնային հասցեն:
11. Հաջորդ տողում՝ աջից, 11 տառաչափով գրվում է հեղինակի ORCID -ը:
12. Հաջորդ տողում՝ աջից, 11 տառաչափով գրվում է այն պետության անվանումը, որի քաղաքացին է հեղինակը:
13. Երկու տող ներքև, առկայության պարագայում, նույն կարգով, գրվում է մյուս հեղինակների տվյալները:
14. Երկու տող ներքև, 12 տառաչափով գրվում է հոդվածի ամփոփագիրը (**Abstract**): «**Abstract**» բառը գրվում է 12 **bold** տառաչափով:
15. Երկու տող ներքև, 12 տառաչափով գրվում է բանալի բառերը (**Key words**): «**Key words**» բառերը գրվում են շեղատառով (*Italic*)՝ 12 **bold** տառաչափով:
16. Երկու տող ներքև, 12 տառաչափով գրվում է հոդվածի տեքստը, որը պարտադիր պետք է ունենա հետևյալ բաժինները՝ **Introduction, Conflict setting, Research results, Conclusion**: Հոդվածը կարող է ներառել նաև այլ բաժիններ, մասնավորապես՝ **Materials and methods, Experimental procedures, Discussion**, այլ: Բաժինների անվանումները գրվում են 12 **bold** տառաչափով՝ 10 մմ խորքից: Հաջորդ տողից, 10 մմ խորքից, 12 տառաչափով գրվում է բաժնի տեքստը: Յուրաքանչյուր բաժին սկսվում է գրվել նախորդից երկու տող ներքև:

17. Բանաձևերը ներկայացվում են **Math Type** ծրագրով, առանձին տողով, մեջտեղում և համարակալվում են աջ մասում՝ փակագծերի մեջ:
18. Տեքստում կարող են լինել նկարներ, գծապատկերներ, աղյուսակներ: Նկարները և գծապատկերները համարակալվում են «Նկ.» նմուշառմամբ: Դրանց անվանումները գրվում են 11 **bold** տառաչափով՝ մեջտեղում՝ նկարների (գծապատկերների) ներքևում՝ առջևից նշելով «Նկ. և նկարի (գծապատկերի) հերթական համարը»: Անվանման տակ՝ մեջտեղում՝ 10 տառաչափով կարող են գրվել համապատասխան բացատրություններ: Աղյուսակները համարակալվում են «աղ.» նմուշառմամբ: Դրանց անվանումները գրվում են 11 **bold** տառաչափով՝ մեջտեղից՝ աղյուսակի վերևում, իսկ անվանման վերևում՝ աջից, 11 **bold** տառաչափով, գրվում է «**Աղյուսակ** և աղյուսակի հերթական համարը»: Աղյուսակի մեջ գրառումներն իրականացվում են 10 տառաչափով (անհրաժեշտության դեպքում՝ 9 տառաչափով):
19. Հոդվածի վերջում, երկու տող ներքև, ներկայացվում է օգտագործված գրականության ցանկը (**References**)՝ համարակալված ըստ հղումների հերթականության: Աղբյուրները բերվում են [...] նմուշառմամբ: Հոդվածների վրա հղումները ներառում են հեղինակ/ներ/ի Ազգանունը, Անվան, Հայրանվան սկզբնատառերը, հոդվածի անվանումը, փակագծերի մեջ հոդվածի հրատարակման տարին: Այնուհետ դրվում է «//» նշանը և գրվում է հանդեսի անվանումը, քաղաքը, հրատարակման համարը, էջերը: Իսկ գրքերի, մենագրությունների դեպքում՝ էջերի ընդհանուր քանակը: Աղբյուրները ներկայացվում են բնօրինակ և անգլերեն թարգմանված տարբերակներով (ներկայացվում է գրականության 2 ցանկ՝ բացառությամբ այն դեպքի, երբ բոլոր հղումները անգլերեն լեզվով հրատարակված նյութերի վրա են):
20. Առանձին էջի վրա տրվում են հոդվածի ամփոփագրերը հայերեն և ռուսերեն լեզուներով: Արտերկրից ներկայացվող հոդվածների ամփոփագրերի թարգմանությունը, անհրաժեշտության դեպքում, իրականացնում է տեղեկագրի խմբագրությունը: Ամփոփագրի հայերեն տարբերակը ներկայացվում է 11, իսկ ռուսերեն տարբերակը՝ 12 տառաչափով: Ամփոփագրին, ներկայացվող լեզվով կցվում են բանալի բառերը:
21. Առանձին էջի վրա բերվում են հեղինակ/ներ/ի մասին տվյալները (պաշտոն, հեռախոս, գիտական աստիճան, գիտական կոչում, էլ. հասցե):
22. Հոդվածները ներկայացվում են info@bulletin.am հասցեով:
23. Անգլերեն տարբերակից բացի, հեղինակը ներկայացնում է նաև հոդվածի հայերեն կամ ռուսերեն տարբերակը (բացառությամբ արտերկրից ներկայացվող հոդվածների): Ամփոփագրում, վերնագրից հետո բերվում են հեղինակ/ներ/ի Անվան, Հայրանվան սկզբնատառերը և Ազգանուն/ները:
24. Հոդվածները ստուգվում են գրագողության դեմ:
25. Հեղինակը կրում է գաղտնի տեղեկատվություն հրապարակելու ողջ պատասխանատվությունը:
26. Հոդվածները տպագրության են երաշխավորվում խմբագրական խորհրդի կողմից՝ խմբագրական խորհրդի անդամի երաշխավորությամբ կամ գրախոսման կարծիքի հիման վրա: Կարծիքը պետք է պարունակի եզրակացություն գիտական նորույթի վերաբերյալ:
27. Բացասական եզրակացություն ստացած հոդվածները տեղեկագրում հրատարակման ենթակա չեն: